ՄՈՍԿՎԱՅԻ Մ.Վ.ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԿԻՑ Ա.Հ.ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ.

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (VIII դասարան)

ՀԱՐԳԵԼԻ՛ ԴԻՄՈՐԴ

Ընդունելության թեստը բաղկացած է *10* առաջադրանքից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է *5* միավոր (ընդամենը՝ 50 միավոր):

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների*:*

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է *60* րոպե*:*

ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. Ըստ անհրաժեշտության լրացնել բաց թողած տառերը.

Լայն__կրան, խոչ__նդոտ, զի__ել, ար__ունք, հա__շտապ, ուղ__ճար, հարա__, ու__տապան, շնոր__ալի, մ__իկ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. Ընդգծել մեծատառով գրվող բառերը.

ԼՈՒԻԶ ՍԻՄՈՆ-ՄԱՆՈՒԿՅԱՆ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ, ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ, ԾՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ, ՆՈՐ ՋՈՒՂԱ, ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ, ՓՈՔՐ ԱՍԻԱ, ՐԱՖՖՈՒ «ՍԱՄՎԵԼԸ», ՎԱՀԱԳՆ ՎԻՇԱՊԱՔԱՂ, ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. Սյունակներից առանձնացնել և կողք կողքի գրել հոմանիշ բառերը (հոմանիշների 5 եռյակ).

1. տպել	1. կայտառ	1. վախենալ
2. աջակցել	2. օգնել	2. օժանդակել
3. ահաբեկվել	3 կարևոր	3. դրոշմել
4. էական	4. դաջել	4. առանցքային
5. աշխույժ	5. սրասափել	5. կենսախինդ

_____

_____

_____

_____

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4.Կազմել տրված գոյականների հոգնակի թիվը.

հետախույզ _____

որսաշուն_____

հանքահոր_____

նախամարդ_____

վաչկատուն_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. Ընդգծել ածականի գերադրական աստիճանի օրինակները.

Ամենակեր, ամենաերկար, ամենից վախկոտ, ծիրանաագույն, գերագույն, խստագույն, երփնագույն, ամենից մաքուր:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. Սյունակներում առանձնացնել որակական և հարաբերական ածականները.

Դրախտային, անրջային, քաղցր, լուսե, վստահ, բարակ, կիսակառույց, մերկ, թավշե, աշխատանքային:

ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ	ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. Առանձնացնել և սյունակներում գրել.

Ամեն մի, ոմանք, միևնույն, ցուցադրաբար, գյուղեգյուղ, պատահաբար, արագորեն, հետո, ո՞րը, այդպես:

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ	ՄԱԿԲԱՅՆԵՐ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. Տրված թվականները գրել բառերով.

87_____

69_____

101-րդ_____

XII_____

$\frac{5}{3}$ _____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. Որոշել տրված բայերի եղանակը, ժամանակաձևը, դեմքը, թիվը, սեռը.

Կգրավեիք _____

սպառնանք _____

վերդարձի՛ր_____

պիտի սիրեք_____

պարելու ես_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. Կազմել նախադասություն՝ չխախտելով տրված բառերի հերթականությունը.

ա/ Իրիկնամուտ, մութ, ընկնել, առաջ, ես, հանդիպել, ընկեր:

_____

_____

_____

բ/ Մուշեղ, անկեղծ, խոսք, ասել, Պապ, թագավոր:

_____

_____

գ/ Սպարպետ, Մուշեղ Մամիկոնյան, երակ, հոսել, առյուծասիրտ, հայր, արյուն:

դ/ Ամառ, արև, բարկ, ճառագայթ, սփռվել, դաշտ, վրա:

ե/ Բարգավաճել, գյուղ, և, տարեցտարի, մարդաշատ, դառնալ: